ւոյնսերէն միայն՝ հայազգի Սոփրոնիոսի՝ որ իր կազմակերպիչ ոգւովն և հանճարովն յաջողած է ոչ միայն մեծ ծառայութիւն մատուցանել պատկանած վանքին և Երուսաղէմի Անապատին, այլ նաև իր հայրենի երկին հոգևոր կեանքը և գեղարուեստի գեղեցկութիւններն չքնաղօրէն պայծառացնել մինչև Պաղեստինի խորը, ի պանծացումն այն ցեղին որմէ սերած էր ինքը։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՒՆՈՒՆԻ

# ՄԱՆԴԱԿՈՒՆԻԻ ՃԱՌԵՐՈՒՆ ՄԷԿ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐԸ

Շար. ՍԻՈՆ Թիւ 1. 1927

| | | | Տպագիր | Ձեռագիր |
|---|---|---|---|---|
| » — » | | 34 | զի ողորմութիւն . . . | զի ա՛յս ողորմութիւն |
| » — » | | 38 | զանցուցանել զմեծամամբն | անցանել զմեծամամբն |
| » 77 » | | 6-24 | (Վիճաբանել հոգւոյն չկայ նաև- | մեր Ձեռագրին մէջ) |
| » 78 » | | 2 | ապա եթէ արտմիցիք և հայհոյիցէք — | ապա եթէ արտնջիցէք և հայհոյիցէք, կ'աւելնէ . . . և իբրև չար ինչ գաղքատութիւնդ համարիցիք |
| » — » | | 7-8 | որպէս Սոդոմայեցիք, որք . . . և անդ տանջելոց են | որոց ի դէպ են Սոդոմեցւոյն(!) պատիժքն . . . և անդ ակն ունին տանջանաց |
| » — » | | | որոց մ՛ լիցի | որ քա՛ւ եւ մի լիցի |
| | | | Ճառ Թ | Ճառ Ը |
| » 79 » | | 5 | յարդարութենէ | յառաքինութենէ |
| » — » | | 8 | փարիւք | փարուք |
| » — » | | 10 | առողջացուցանել | ողջացուցանել |
| » — » | | 16 | յաղագս փրկութեան | յաղագս բազմաց փրկութեան (հմմտ. Տպ. էջ 81 տ. 4) |
| » — » | | 25 | ցանկլի հօտից տեսանէք | ցանկ ի հաւտի տեսանեմք |
| » — » | | 27 | գհետ գայլոց ընթացեալ | զհետ գայլոց ընթացեալ լինին հաւտաք |
| » 80 » | | 6 | գայլավառնեալ | տարածանեալ (Ձեռագրին լուսանցքն այս Ձեռք) |
| » — » | | 10-11 | յահեղ հովուապետէն | յահէ ահեղ հով[ու]ապետին |
| » — » | | 19 | զապաւառ տօնից (Մաղ. Բ 3) | զապաւառ պատուանդանից (՞) |
| » — » | | 30-33 | յիշեա և զփոյթս Պաւղոսի և Պետրոսի . . . որք հրով . . . | (այս տողերը չկան մեր Ձեռագրիը) որք հրով . . . |
| » 81 » | | 10 | ուացին և մերքն բարեաց գործոց վերակացու լինել | ուացին եւ մերքս բարի գործովք վերակացու լինել |
| » — » | | 24 | աստուածածանութեամբն | աստուածածանութութեամբն (Ընդօրինակողին սխալ գրչութիւն է) |
| » 82 » | | 12 | ի լուցելոյ հրազէ լուսաւորին | ի լուցելոյ հրազէ լուցանին |
| » — » | | 34 | մթերք մեղաց մեծից | մթերք մեղանաց |
| » — » | | 11 | սիրնեանք | . . . ունքն (Ձեռքին ատաղձն մաշ եղած) |
| » — » | | 13 | հմայք գիւտկան (հմմտ. էջ 85 տ. 8-9) | հմայք գիւթականք |
| » — » | | 18 | ի տեսիլս հրապարակին | ի տեսս հրապարակին |
| » — » | | 22 | չուայտութեամբ գեղխեալն | զաւչկոտութեամբն զխոութիւն և որ- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | և զոր կորստութեամբ արբ-եալն | կորստութեամբն արբնալ |
| » | 84 | » 34 | եւ ցոյց զջան նոցա | եւ ցոյց ջան անընդատ |
| » | — | » 36 | ծարաւանօք(.՞) | ծարաւանաւ |
| » | — | » 3 | և ի հաւատան յարձակէին | և ի հաւատն յարձակէին |
| » | — | » 16 | վասն ուղղութեան | վասն ողորմութեան |
| » | — | » 26 | պատժովք մուտս խնդրեն | պատճառանօք մուտս խնդրեն |
| » | — | » 26 | արածեցէք որ ի ձեզ հօտ է | ստածեցէք (!) որ ի ձեզ հաւտդ է . . . |
| » | 86 | » 7 | զօրէնսն Աստուծոյ տեսանէր | զօրէնսն Աստուծոյ խստան տեսանէր |
| » | — | » 8 | անհնարին վրիժուց պատժե-ցաւ | զանհնարին վրէժս պատժեցաւ |
| » | — | » 13-14 | զհամար չազգակեր անդա-մոցն խնդրեն | զհամար [illegible](?) խոյոցն խնդրեն |
| » | — | » 32 | յարքունեաց մնասեցեն | արքունեաց մնասեցեն |
| » | — | » 33 | կարս ձգեն | կարոց(.՞) ձգեն |
| » | 87 | » 3 | որ զումար հասեալ կայ ի վերայ | որ զումարեալ հասեալ կայ ի վերայ |
| » | — | » 6 | տեղէ | տեղայ |
| » | — | » 14 | վաճառաց զրկութեան | վաճառազրկութեան ([illegible]) |
| » | — | » 37-38 | մերուորեա զնոսա սուրբ հոգւոյն. հալածեա զբնա-կիչս բանսարկուին | մերուորեա հոգւոյն սուսերաւ. ա-ւարեա զբնակս բանսարկուին |
| » | 88 | » 14 | զվարավատնեալն | զվարատեալն |
| | | | Ճառ Ժ | Ճառ ԺԱ |
| » | 89 | » 4 | մթերք հոգոց | մթերք ազոյ |
| » | — | » 8 | փոքր կարծեցուցանէ ստա-տանեայ | [illegible]. զի այս իսկ է խեղդրանէ չարին սովորութիւն, մեծամեծս վի-րաւորէ և փոքր կարծեցուցանէ |
| » | — | » 20-21 | եւ ամենայն իսկ . . . | եւ ամենեւին իսկ . . . |
| » | — | » 22 | միահաւասար զատին և տան-ջին | միահամարք պատժին |
| » | — | » 26 | Միահաւասար զերկոցունց եղանել յարքայութենէ. | Միահաւասար զեկուցանէ զպատուհա-սըն և հանէ յարքայութենէն. |
| » | 90 | » 6 | հաւասար առնէ և զրամբա-սողութիւն | ընդ նմին համարեալ է և բամբասո-ղութիւն |
| » | — | » 27 | առէ. | Առէ իսկ եթէ . . . |
| » | — | » 31 | և զայլս խեղութեամբ թըշ-նամանէ | և զայլոյ խեղութիւն թշնամանէ |
| » | — | » 33-34 | այլ և զի ինքն իսկ թէև բիւր չարիք առացեալ ունի, ծածկէ և խաղաղէ. և զեղ-բայրն թէ և սուղ ինչ յան-ցանիցէ . . . | Այլ զիւրն, եթէ բիւր չարիք իցեն, ծածկէ խաղաղէ. և եղբօրն՝ եթէ սուղ ինչ յանցանք իցէ . . . |
| » | 91 | » 9-10 | եւ հանապազ անդադար բա-ղոքեն յեզուք. ամենեցուն յեղբօրն բամբասանս | [illegible] |
| » | — | » 15 | ցանկութեան կամաց | ցանկութեան կարեաց |
| » | — | » 16 | քաղցր՞ւ | քաղցրոյ |

digitised by A.R.A.R.@

| | | | |
|---|---|---|---|
| » — » | 19 | . . . զասակ զատատանայ տե-սանեա զմիտս բամբասողացն | . . . սոսկ զատատանայի կաման կատարե-լով |
| » — » | 21 | յուզզան շրջին | յուլացեալ հետաքրքիր շրջին |
| » — » | 23-25 | կամ ի յայլմէ ի յանկլիս յա-ւելեալ չարաչար սերմ և զա-զրացուցիչս . . . զեղբայրն ցուցանէ | կամ յայլմէ իմն յաւեալ յաւելոյ ի չա-րեաց, և առեալ և արհամարհեալ . . . զեղբայրն կացուցանէ |
| » — » | 28 | որում և առէ իմ՝ թէ վա՛յ որ կարծեն, և նշուկ որ ըղ-կարծիան տայցեն | Այս տողերուն տեղ Զեռագիրն ունի. Եւ ոչ յաւ մեծի քարոզին՝ թէ մի յառաջ քան զժամանակս դատիք, մինչև եկես-ցէ Տէր՝ որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարի, և ապա իւրաքանչիւր զոր-ծոց գովութիւն եղիցի։ |
| » 92 » | 12 | զի՞ թշնամանէ . . . . | Յաւելուած. Զի զքահանայս և զվարդա-պետս քեզ պատուել արժան է և ոչ անարգել։ Յաթոռն Մովսեսի նստան դպիրքն. զամենայն զոր ասեն ձեզ ա-րարէք և պահեցէք, բայց ըստ գոր-ծոց նոցա մի՛ առնէք, զի անիրաւս գործեն։ Ոչխար ես, մի՛ ընդդէմ հով-ուին յառներ. աշակերտ ես, մի՛ զա-տիր զվարդապետն. զօրական ես, մի ընդդէմ թագաւորին պատերազմիր։ |
| » — » | 20 | յանպիտանեաց | յանարգ (-ն) աց |
| » 93 » | 13 | ոչ ձեռնադրութիւնն ձեռ-նադրութիւն | Յաւելուած. և ոչ մկրտութիւնն մկր-տութիւն |
| » 94 » | 1 | որ զխեղձ ինչ մեզաց ունիցի | որ խեղձ ինչ մնաց ունիցի |
| » — » | 10 | արատաւորքս ապրեսցուք | արատաւորքն սրբեսցին |
| » — » | 13 | չարապատիժս | չարաչար պատիժս |
| » — » | 39 | զի ոչ եթէ ծակէ և ելանէ | զի ոչ եթէ ծակէ զորովայնդ և ելանէ |
| » 95 » | 5 | յահէ հրացան հոսանացն գե-տոյն | յահեղ հրահոսան գետոցն |
| » — » | 11 | զիւրաքանչիւր վաստակս վաստակել | զիւրաքանչիւր վարանս վարանել |
| » — » | 19 | ընթեռնու և վարդապետէ վասն քո | գիրս կարդացեալ ի խրատել և վար-դապետէ գրովք սրբովք |
| » — » | 20 | մատակարարէ խորհրդոյն վասն քո. մինչ պատարագ մատուցանէ վասն քո | ի ծունր իջեալ աղաչէ՛ վասն քո. պա-տարագ մատուցանէ աղաւթել և մաղ-թել մատակարարեալ խորհրդովն սըր-բով վասն քո |
| » — » | 28 | պատկօք յարգարէ | պատկաւ զարդարէ |
| » — » | 38-39 | ծառայութիւն . . . հարկանէ | ի հարկի կայ սպասաւորութեան |
| » 96 » | 2 | . . . և որպիսի՞ հուրք և տան-ջանք | . . . և որպիսի՛ խարս և սուրս, և տան-ջանք |
| » — » | 6-7 | իբրև զանձն և զհոգի քո սի-րել | խնամ ունել որպէս անձին, և որպէս հայր զորդի սիրել |
| » — » | 8 | զվաստակս նորա երանել | ի վաստակս նորա աշխատել |
| » — » | 18 | սանձեցէք զլեզուս ի չարա-խօսութենէ | Ունի այս տողերէն առաջ. արգելէք զբե-րան բամբասանաց, Ետոյ. կափուցէք զլսելիս ձեր ի շողմաց բանից. |

digitised by A.R.A.R.@

» — » 26-27 որ հանէ ի վերին քաղաքն փափաքելի յանանց վայելչութիւնս

որ հանէ ի բարութիւնսն ի վայելուչ արքայութիւնն երկնից.

Այս [illegible]. ո՛վ պատուական եղբարք, աղաչեմ յիշել զանպիտան գրիչս և զծնողսն մեր, մանաւանդ և զՄարգիս զվարդապետն իմ որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս յԵրուսաղէմ քաղաքի, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած։

# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## Ա.

**ԾՈՎԵՐ ՈՒ ԵՐԱԶՆԵՐ**, Տիրան Մազմանեանի՝

Հրատարակիչ Մ. Ն. Պանանեան, Նիւ Եորք Տպագր. 1927 «Արաքս» Բ. Թօփալեան, Հատոր 8° էջ 180. Գին 75 սենթ։

Տիրան Մազմանեանի այս հատորիկը որ կը պարունակէ 12 հերթուածներ, նորավէպ մը, **Իր Երազ**, եւ **Առասպելներ** վերնագրով երեք ուրիշ նորավէպեր, նուիրուած հրատարակած է եղբայրաբար հեղինակին հայրենակիցը. Մ. Ն. Պանանեան. Նիւ-Եորքէն, իբրեւ յուշարձան հեղինակի յիշատակին։

Տիրան Մազմանեան, Սեբաստիացի, 33 գարուններու կեանք մը ունեցած է, մանուկ հասակէն իր ուսումը հետզհետէ առնելով Սեբաստիոյ Արամեանին, Բերայի Մխիթարեանին եւ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանին, ուրկէ ընթացքը կ'աւարտէ 1914ին։ Ուսուցչութեամբ տարի մը կը մնայ այս վերջին վարժարանին մէջ, անկէ կ'անցնի Զուիցերիա, Լօզանի համալսարանին Հրանսերէն գրականութեան դասընթացքին հետեւելու համար, երբ անողոք հիւանդութիւն մը կը գայ զինքը անկողնին։

Անկէ վերջ՝ իր տարը տարուան կեանքը եղած է սանատորիաններու, գիւղերու, լճակներու, ցաւագին յուսախաբութիւններու, աղքատին աղէտներու պատճառուած անգոհանքներու շարան մը, որոնք իր աղէտ խոկ ակար մարմինին ուժերը փլատակի մը կը վերածեն՝ զերեզմանի սեւ յատակին մէջ ապաստանելով իր զգայուն հոգիի խաղաղութիւնը եւ լեռնակուտակ վիշտերու բռփոխանքը։

Մազմանեան կը պատկանի մեր բանաստեղծներու այն խումբին որ իրենցմէ խուսափող կեանքին սեւ հակազդեցումովը լեցուն՝ մտայղ եւ կեղ եւ այրող տողերու ու հոգեզղածութիւններու մէջ ուզած են պատկերացնել երազներու ու տեսլականի իրենց կարօտը ու անողոք իրականութիւններու դառնութիւնը։

Հատորը ծայրէ ի ծայր մանուած աղխողում եղ մըն է, սիրտ բզքող, հոգին ցնցող. հատուածը եւ յոյսի բռփոխանքը մարող. գերեզմանի մուտով զծուած տեսակ մը մտայլ, տխուր, եղերական, գերեզմանային յուսահատեցնող պատկեր մը, ուրկէ մէջ միակ իրականութիւն մը կարծես կը յայտնուի, ցաւ, անդարձելի, անտեր եւ մեռնելով, մահուան տեսիլը, եւ մարդոց ու կեանքի սրանկութիւնը։

Եւ տարբեր չէր կրնար ըլլալ, երբ հեղինակը դպրոցի գրասեղաններէն իսկ կ'զգար մարդկային գաղափարներու անկատարութիւնը, անձնութիւնը որ կը շինուի սխալ ներսեսանով. ապա թոքերի կապկանզում մը, արժանիքին ուրացում եւ անտեսում մը, բարբարոս պատերազմի մը ամերածութեան մէջ, մարդոց եւ ազգերու անբանացում մը. գազանային բնազդներու անատոր պարբերումով մը, որ կը բռնէ իդէալին, արդարութիւններուն դէմ, սիրոյ, գութի, եղբայրութեան, բոլոր ազնուական ու փափուկ զգացումներու բաղումով։ Այս է, հանի մը տողերու մէջ, ինչ որ կը պարունակէ Մազմանեանի գիրքը։

Մեր համեստ անձուկ էջերը թոյլ չեն տար մանրամասն վերլուծում մը ներարկելու հեղինակին գործը. բայց այդ գրքին ընթերցում մեզի անէնէն աւելի վիշտ կուտայ ա՛յն բանին համար, որուն դէմ կ'ընդվզի հեղինակը, կեանքին համար. եւ մենք պիտի ուզէինք որ ապրէր հեղինակը. նոյնիսկ չարուած ու բանաւոր այդ կեանքը, որպէսզի բախտը ունենայինք տեսնելու իր հեռանկարուած գրիչին արդարութիւնները եւ զգայուն եւ երեւակայութեան կենդանի պատկերացումներ, աւելի բեղուն, աւելի հոծ, աւելի հասուն։

Գիրքը համեստով կը կարդացուի մինչեւ ծայրը. իբրեւ գիծ, իբրեւ պատկերացում, իբրեւ խորհուրդ. իբրեւ հոգեբանական վերլուծում, եւ իբրեւ ազդեցիկ արտայայտութիւն։ Իր եմոյշ, յառաջ կը բերեմ իր **Պանդուխտի Տեսիլ** հերթուածէն մաս մը։

*Պանդուխտ հոգիս՝ աչքերուս հետ արտասուեց,*
*Երբոր տրտմիկս բոլորիս հետ բանտեցաւ.*
*Ու տեսայ սեւ հայլիին մէջ խաւարին*
*Հայրենի լոյս պատկերներըս մերկօրէն.*
*Տեսայ հայրիկս, յոգնած . . . բոլոր հակառակ,*
*Եւ սէր մայրիկս, որ բիբերը քամելով՝*
*Զմրուխտ գուլպաս կը հիւսէր.*
*Տեսայ քոյրերս, յորդահեղեղ մազերով՝*
*Եւ աղբարներս, որոնք ծնրած կ'երգէին անվերջ,*
*Մրմունջներու կասցով.*
*Ու ծեր կատուս վարպետեց*
*Որ կը մրափէր փէշին վրայ թաւ գորգին։*

Երուսաղէմ Գ. Մ.

digitised by A.R.A.R.@